Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 54 — 27 ՀՈԿՏ. 1909 ՇԱԲԱԹ ՊՈՍՏՈՆ — Oct. 27. VOL. No. 54

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԴԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—o—
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր։
—
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ՁԱՅՆ Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
AN ARMENIAN WEEKLY.
27 Beach St., BOSTON

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
AMERICAN HAI PUBLISHING Co
8 Bennet Street,
BOSTON, MASS.

Entered at the Post at Boston, as Second - Class Mail Matter.

Subscription $1.50 a Year.

Ուշադրութիւն մեր տեղափոխութեան և նոր հասցէին։

Ցոդուած, թղթակցութիւն և դրամ ղրկել հետեւեալ հասցէով միայն։

AMERICAN HAI PUB. CO.
8 BENNET ST., BOSTON, MASS.

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Մեր բոլոր գործակալներէն կը խնդրենք որ Ձայն-Հայրենեացի ներկայ թուոյ հաշիւին հետ իրենց քով եղած դրամներն հաճին անմիջապէս ղրկել թերթիս հասցէին։ Հարկ է ըսել թէ, ընտանեկան ծանր պարտականութիւններ մեզ ստիպեցին քաշուիլ թերթին հետ ունեցած մեր ներկայ պարտականութենէն և գործը ուրիշներու յանձնել. ուստի մեր հաշիւները մաքրելու են մինչև ներկայ թիւս։

Գարեգին Պ. Զիթճեան

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զանազան քաղաքներու ներկայացուցիչները ինչպէս նաև ուրիշ կարևոր անձնաւորութիւններ Վարչութեանս դիմելով՝ դիտել կուտան թէ Ուստր գումարելի Ազգային Համաժողովին համար նշանակուած օրը շատ մօտ է, և թէ ժամանակամիջոցի երկարաձգում մը անհրաժեշտ է, որպէս զի ամէն տեղ պատեհութիւն բնենան խորհելու և օգտակար թելադրութիւններ ներկայացնել ժողովին։

Վարչութիւնս նկատելով թէ յետաձգումի մասին եղած թելադրութիւնները բանաւոր են՝ սիրով կը համակերպի, և ներկայիս կուգայ ծանուցանել թէ համաժողովը պիտի գումարուի Դեկ. ամսոյ 22. 23. 24դ. օրերը։

ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՆԳԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՑԻ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՐԾԻՔԸ

Ձայն-Հայրենեացի ներկայ թուոյն մէջ Համաժողովի առթիւ երկու յօդուածներ կերևան, որոնք նշանակելի են այնու՝ որ գրուած են իրարմէ հարիւրաւոր մղոններով հեռի տեղերէ. գրուած իրարմէ բոլորովին տարբեր տրամադրութեան տէր անձնաւորութիւններէ՝. մին կուսակցական, երբեմն ամենա թունդ տեսակէն. ու միւսը յառաջդոյն քան զժամանակս և այժմ՝ անվիճելի շեղոք մը՝. երկուքն ալ սակայն կը գրեն տեսութեամբ, ոգւով ու եղրակացութեամբ իրարու՝ այնքան յար և նման։ Տեղի ունութեան պատճառաւ այս անգամ չկրցինք դնել նոյն նիւթին վերայ Ուստրէն Դաշնակցականի մը կողմէն գրուած յօդուածն՝ որը ևս իր մուրճը վերցուցեր է կուսակցականութեան գլխուն, բուռն զայրութով մեղադրանք կը կարդայ իր կուսակիցներուն՝ որք համաժողովը անյաջող հանելու ջանքեր իգործ կը դնեն. ու կը յաւելու „"Ես յառաջիկայ կիրակի իմ կուսակիցներուս դէմ կենալով՝ պիտի ջատագովեմ ազգային համաժողովը այդ հասարակաց կարծիքը պայծառացնելու միջոցներէն մին կը նկատենք։

Գ. Պ. Զ.

զային համաժողովին կենսական հարկաւորութիւնը. այն ժողովին մէջ որ՝ Ուստրի Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ պիտի գումարուի սոյն նպատակով։,,

Ազգային նոր հոսանք մը կստեղծուի. հասարակաց կարծիք մը կը բղխի ազգին ապառաժ կուրծքին նոր բացուածքներէն. թշնամիին զէնքերովը բացուած, կուսակցամոլութեան ճանկերոցն ալ խորնկցած՝ ազգին արիւն վազող վէրքերէն սկսած է ընդհանուր եղբայրութեան ոգին ճառագայթել, ու հասարակաց կարծիքին երանաւէտ ծիածանը կամար կը կապէ մեր աւերեալ հայրենիքին վրայ—, ծիածան արիւնի, արցունքի և յոյսի—։

Ժողովուրդին զարթումին արշալոյսը կը ծագի. ազգապահպան մարմինի ծընունդը կը նշմարուի, այնպէս ինչպէս մարգարէք Մեսիային դալուստը կը տեսնէին։ Ժամանակը լի է նշաններով ու մարգարէական շունչով։ Ազգային թատերաբեմին վրայ ենք։ Բաղում քստմնեցունող արարուածներէ ետք՝ առջեւնիս նոր վարագոյր մը կը կախուի, որուն վրայ վսեմ ու փրկաւէտ պատկեր մը կը տեսնենք,— ամբողջ հայութիւնը՝ ծերն ու պատանին, հարուստն ու աղքատը, ուսեալն ու ոչ ուսեալն, յեղափոխականը ու չեզոքն, և դեռ երէկ իրարու օձիքը պատռող կուսակցականներ, ամէնքն ալ, գրկախառնուած են հայրենեաց Տապանակ Ուխտին շուրջը. կուխտեն մէկ սիրտ, մէկ հոգի, ձեռք ձեռքի տուած գործել ազգին վէրքերը բուժելու, գոյութիւնը ապահովելու, պատիւը փրկելու, աւերակները շինելու, Հայաստանի հին փառքը իրեն վերադարձուելու։ Վարագոյրը մի մեծ ապակի է, և, հոն տեսնուած պատկերն մերն է.— անոնցը՝ որք չեզոքութեան պատեանէն ու կուսակցամոլութեան հրթիռներէն դուրս կուգան՝ իրր հայրենանուէր ու լուրջ գործի մարդեր—։

Այս տողերը գրողն ալ ունեցած է իր կուսակցամոլութեան շրջանը, ու, այժմ իրականութեանց տպաւորութեանը տակ հիասթափած։ Նա որ երբեմն իր բոլոր յոյսերը իր կուսակցութեան գրուանին տակ միայն կը դնէր, այսօր իր աչքերը հայութեան յառած՝ անոր հոգիին արտափայլումին կըսպասէ. այն հզօր պայծառութեանը՝ որոյ մէջ պիտի լուծուին կուսակցութիւնները՝ ինչպէս աստղերը արևին, և որը միայն պիտի հանդիսանայ մեր ազատութեան արեգակը։

Թող հասարակաց կարծիքը հայութեան հոգիէն արտափայլի. և ահա ազգային անկախութեան յայտարարութիւնը արձագանք պիտի տայ աստղէ աստղ։

Ուստր գումարելի ազգային համաժողովը այդ հասարակաց կարծիքը պայծառացնելու միջոցներէն մին կը նկատենք։

ԲԵՄԸ

Հետևեալը ատենախօսած է Արժ. Պատ. Հավելօք իր ամպիոնէն Առսթ Թեքսասի մէջ։

«Յիսուն տարիներ առաջ հետևեալ բառերը արտասանուեցան նշանաւոր խորհողէմը—, ժամանակիս դրամագլխական տիրապետութիւնը այնքան վտանգաւոր է՝ որքան աղետալի էր անցելոյն ֆիզիքական բռնաւորութիւնը։ Միլիոնատէրը կըսպառնայ հանրակութեան բարեկեցութեանը մեր օրով՝ ինչ որ Պարոնական Լօրտ մը կընէր միջին դարուն։ Երկուքն ալ իրենց առաւելութիւնները կը գործածեն իրենց բարձր դիրքը պահելու համար։ Իմ գլուխս այնքան կախում ունի մէկէն՝ որքան միւսէն իմ հացս։ Հասեալ է ժամը յորում մարդս այնքան խիստ և արդար անարգանքով պիտի նայի դէպի դրամագլխի առանձնաշնորհեալը՝ որպէս սովոր էր նայիլ մթին դարերու յափշտակիչ տիրողներուն։ Աշխարհի ստացուածքը քիչ մարդոց ձեռքը անցածէ, միջոցի դռները փակուած են մեծամասնութեան առջեւ, և, մրցմտն դրութիւնը իր տրամաբանական վախճանին հասեր է։ Եկեղեցականութեան դարը անցած՝ և աշխարհի դրութիւնը վերջացած՝ ազատութեան պողպատեայ ձեռքը դրամագլուխի ահագին բարդութիւններով զօրացած՝ իր ջախջախիչ ծանրութիւնը այնքան զգալի կընէ ճնշուած ժողովրդեան՝ որ զայն կը մղէ դէպի անխուսափելին։— որ է. ժողովուրդը ինք իր ձեռքը առնէ ազգին արհեստն ու առևտուրը ու այսպիսով կործանէ դրամի այն ուժը որ այժմու օրավարձի գերութիւնը կըստեղծէ։

Երկինքին երեսը ծանրացող մթադին ամպի մը պէս մեր գլխուն վրայ յեղափոխութիւն մը կախուած է։ Ոչ մի քաղաքական շաղակրատութիւն կարող է արդեամբ արգիլել սպառնալից տնտեսական յեղափոխութիւնը, որ պիտի հանդի ամենքին համար կատարեալ արդարութեան մէջ։ Մարդկային աւելի արդար վիճակ մը տրամադրող պահանջը ուրիշ բան չէ՝ բայց միայն մարդկային իրաւանց պահանջումին հնաղանդութիւնը։

Ընկերական կեանքը խաթարուած է չարութիւններով, որուն վերջ մը դրած չէ եկեղեցին իր «Բարի եղիք» յորդորներովն։ Ընդունայն է խրատել վաճառականը՝ որ դադրի իր ապանքները կեղծելէ. մինչ իր մրցակիցը նոյնը կը շարունակէ։ Նա կամ պիտի ընէ նոյնը եւ կամ կորսնցունէ իր շահն ու ապրելու միջոցը։ Ի՞նչ արժէք ունի ըսել մէկին «Մի գողանար», քանի որ այդ մէկը անգործ է։ Անօգուտ է պահանջել քարոզիչներէ որ քարոզեն Յիսուսի Ընկերվարական երանաւէտ սկզբունքներն. զի այդ պէս ընելով պիտի կորսնցունեն իրենց բեմը և թափառին աշխարհի ցուրտ ողորմածութեան շուրջը։ Աւետարանի «Բարի լուրեր,,ը ուսուցանել՝ կը նշանակէ աղքատացում. կարօտանք և արտաքսում. մի սպասեր որ ժողովուրդն փոխէ իր վիճակը առանց իր միջավայրը փոխելու. երբ ազգին հողն ու ստացուածքը տրրուի ամբողջ ժողովրդեան ձեռքը, երբ առևտուրի և գաղափարի յափշտակիչ պարոններն պարտաւորուին ստանձնել իրենց իսկական և օգտակար դերը, յայնժամ երկիրը պիտի կրէ նոր երես մը, ու պատմութեան մէջ առաջին անգամն ըլլալով պիտի ողջունուի խաղաղութիւնը. ճոխութիւնը, ուրախութիւնը, եւ ընդհանուրին բարեկեցութիւնը։

Տնտեսագիտութիւնը քաղաքակրթութեան երկնային օրէնքն է. անոր մէջ ծածկուած են հարստութիւն, երջանկութեան և յառաջդիմութեան գաղտնիքներն։ Վաճառատուններ և ԹՐՍԹՆԵՐ հիմնուած են տնտեսագիտութեան վրայ. անոնք կը խնայեն աշխատանքը, ժամանակը և ուժը։ ԹՐՍԹը հարիւրաւոր փոքրաքանակ վաճառող խանութներ իմի կը ձուլէ։ Չկործանենք Թրսթը այլ սանձենք զայն. թող ժողովուրդը տէր ըլլայ Թրսթին ու հողին, այն ատեն ոչ աղքատ պիտի գտնուի ոչ միլիոնատէր, գոհացուցիչ ու միսիթարական ընտանիքը մատչելի պիտի գտնայ ամէնքին։

Ժամանակակից եկեղեցին մի մեռեալ տառ է, ու Հրէական անպէտ և անգործադրելի դարձած եկեղեցին ինչպէս չկրցաւ ճանչնալ Մեսիան, կը վախնամ թէ նոյնը պիտի ընէ Քրիստոնէական ներկայ եկեղեցին Յիսուսի՝ երբ նա ուզէ անձամբ այցելել զայն։

Դարերու մարգարէութեանց բեռները կը կազմեն ապագայ ոսկեդարին երջանկութիւնը. ապառնիմը սակայն որ չկայանար երևակայութեանց, աննիթին, հոգեղենին մէջ. այլ այս նիւթական աշխարհը պիտի լուծուի քահանային ու սեղանաւորին կապանքներէն, պիտի ազատուի, պիտի փրկուի մարդկութիւնը իր թշուառութիւնը և ստորնացումը պայմանաւորող հանգամանքներէն։ Երբ Յիսուս տաճարէն արտաքսեց սրբապիղծները, անոնց «Սուրբ դրամները»ն գետինը թափելով, երբ անոնց ճակատին խարակեց «Իմ հօրս տունը սյր աւազակաց դարձուցիք» երբ իր խարազանը իջեցուց կրօնը շահագործողներու կռնակին. այն օրը մահացու հարուածը տրուեցաւ մամոնային ու կոյր եկեղեցամոլութեան, այն օրը ցանկալի ապագային արշալոյսը ծագեցաւ։

Վերափոխումի շրջանը մտած ենք. սև ժամերը արշալոյսին մօտեցեր են։ Անձնական սեփականութիւն և անհատական շքաւորութիւն, երկուքն ալ գահավիժին ծայրը հասած են։ Հողին անձնական սեփականութիւնը անուղղակի կերպով մարդկային տիրապետութեան մերձակայ թուականը մատնանիշ կընէ։ Դրամագլուխներու ահագին կուտակումները անվճար մնացած վարձքերու արդիւնք են։ Հաղարաւոր գործաւորներու թշուառութիւնը հարկաւոր է միլիոնատէր մը չինելու համար։

Թարգմանեց
Աստուածաբանական ուսանող մը
(Շարունակելի)

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Խմբագիր՝ տէր.

Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղերու Պատգ. Ժողովը հրաւէր կը կարդայ Ամերիկայի Հայութեան Ազգ. Հայրենասիրական Համաժողովը կազմել Ուստր։ Հայ գաղթականութեան օրրանին մէջ, «զգացումներու և կարծեաց փոխանակութեան»ն մը համար, յօգուտ ազգի փր-

կութեան գործին... և Ազգին ոյժերուն միացման արգելք հանդիսացող խոչընդոտներու բարձման վրայ մտածելով՝ առ այդ գործնական միջոցներու դիմելու. կուսակցութեան մի կողմանէ եղած այս ազգօգուտ և յոյժ ժամանակայարմար հրաւէրին մէջ ժամանակին նշանները կտեսնենք. այս հրաւէրը կուսակցականութեան խաչելութիւնն է եւ անոր յուղարկաւորութեան զանգակի ցօղանքը. 'ընդհանուր Հայութիւն կը հրաւիրուի ինքն իր փրկութեան մեքենայի գլուխն անցնելու և իր ցիր ու ցան ոյժերն ի մի հաւաքելու. մինչ կար ժամանակ որ ազգասիրութիւն, Հայրենիքի փրկութեան սր. գործը կուսակցութիւններու մենաշնորհն էր դարձած։ Այս հրաւէրը նոր չէ, տարիներ առաջ Տր. Գարրիէլեան իր գրիչն ու լեզուն նուիրեց այդ գաղափարի իրականացմանը։

Այսօ՛ր... ծայրէ ծայր քարուքանդ գերեզմանացած Հայրենիքի մը 50 հազար անճարակ որբերու երամները, որ կթափառին այդ ամայութիւններու մէջ անյոյս!... Հայաստանի մէջ ապրող, դուսա ողջ մեռնող՝ ժողովուրդ մի, որ անցեալն և ներկայի տագնապներէն և արիւնալից արհավիրքներովը բարոյական անդամալոյծներ են դարձեր՝ ահա այս արհաւիրքներու հանդէպ, յեղափոխականը իր կուսակցութեան գինովութենէն սթափած և զգաստացած ա՛լ կը խորհի... կ'հաշուէ... «Զարնեմ ջնջեմ»ներով և «Ոմա»ներով պռոտոտալու անփորձը՝ հիմա «Խրխան գլուխը քաշած» ոյժերը ամփոփել, ազդայնացնել՝, վերակազմել կձգտի, հեռատես դիւանագէտի մը խոհեմութեամբ։

Ահա հոգեբանական վիճակը այն կուսակցութեան՝ որ ասպարէզ կուգայ Հայութեան առաջ և համագումարի մը հրաւէրը կուղղէ Ամերիկայի Հայութեան։ Մի՞թէ Ամերիկայի հայ գաղթականութիւնը ազատութեան մթնոլորտի մը մէջ ապրելու բոլոր առաւելութիւններուն հակառակ՝ տակաւին պիտի չարունակէ՞ անտարբեր մնալ։ Իրաւունք ունի՞ անտեսել այսպիսի հրաւէր մը, որոյ իրականացումին մէջ կնշմարեմ Հայութեան ապա՛ա յոյսին հեռապատկերը։

Հերիք է... ալ ասկէ վերջ... այսչափ արեան գետերէ և բորբոքած հնոցներէ անցնելէ յետոյ, Անտարբերութեան սոսկ հանդիսատեսութիւն, «ինչուս պէտքէ»ութիւն հայուն համար ֆրէական ոճիր է։

Կուսակցութիւններ բաժնեցին մեր ճգնիմ ուժերը. քաշալերեցինք զանոնք և սնուցինք. թողուցինք որ կուսակցութիւններ իրենց առաջինը և գերագոյնը լինելու կոյր մրցումին մէջ ազգին շահերը ոտնակոխեն, թողուցինք որ խաչագողերու ու շառլաթաններու վոհմակներ յեղափոխականի դիմակի տակէն Հայութեան վերքերն շահագործեն, գգացումները շահավաճառեն. և իրենց ապիտաբեր շահատակութիւններովը եւ եղծումներովը հայութեան միակ յոյսն մնացած յեղափոխականութիւնը պիդմերու մէջէ գետնատարածեն. ամբողջ հայութեան բաղդն ու ճակատագիրը յանձնեցինք կուսակցականութեամբ մոլեգին ափ մը անփորձ անհատներու գթութեանը. եւ մե՞նք, հայ մեծամասնութի՞ւնը, իրեն բաժին ընտրեց հանդիսատեսելո՛ւ!, երբեմն ծափահարելով... և երբեմն ալ պառաւական անէծքներ և յիշոցներ ծեղալով մրցող կուսակցութիւններու գրքոյն... ահա ամբողջ հաշուէկշիռը անցեալին։ Պարտի... ոչ ինչ, Պահանջէ... քայքայում, այս «ոչինչ»ի և «քայքայում»ի հաշուեկշիռը բողոք մըն է անհերքելի որ կը կենայ կուսակցութիւններու գոյութեան ընդդէմ. և անողոք դատապարտութիւն մի է հայութեան մեծամասն «Սէյիրճի» դասակարգին բռնած ընթացքին։

Ցիշեալ հրաւէրը անհատի մը, կուսակցութեան մը ծնունդը չէ. այլ Հայաստանի դեռ մխացող աւերակներու ներքև թաղուած 150,000 զոհերու արեան պանջն է, հայրենիքի փլատակաց մէջ թափառաշրջիկ որբերու լալագին աղերսն է և հոգեւարքի մէջ խորդացող Հայութեան խօլ բողոքն է որ կուզղուի Ամերիկայի ազատ Հայութեան. այո՛, այս հրաւէրը ժամանակին պահանջն է. պահպանողականն ու արմատականը, վախկոտ անտարբերն ու հայրենասիրական հուրով եռ և եփ Ցէտահին, հայ վաչխառուն և հայ ընկերվարականը, հայ ադան և հայ մշակն ամէնքն այ կբաղձան տեսնել ազատ և վերածնեալ Հայաստան մը, կբաղձան բաժին ունենալ ուէ քայլի մէջ, որ կուղղուի դէպի այդ գաղափարականը։

Ոչ ոք, ուրեմն, իրաւունք ունի անտարբեր մնալու այս հրաւէրի հանդէպ։ Թող ուրեմն, Ամերիկայի ամբողջ Հայութիւնը անսալով հայրենիքի հոգւոյն խորքերէն ելած այս հրաւէրին, մէկտեղ գայ Հայենի Տաճարի մը շուքին ներքև և միանգամ ընդ միշտ վերջ դնէ իր մէջ վարակող կործանիչ և ապիտաբեր կուսակցականութեան և հիմնանաքարը դնէ մի հոյակապ ազգային տաճարի, Ազգային ընդհանուր մի կազմակերպութեան, անուն՝ Հայաստա՛ն, անդամն Հայութիւն և նպատակն վերածնութիւն։

Հնչակեան կուսակցութեան հրաւէրը այս ոգւով ներշնչուած կհաւատամ. ընդհ. կազմակերպութիւն մի հայուն փրկութեան միակ յոյսն է. ազգային ոյժերուն միացումին կբաղձայ ամբողջ հայութիւնն ալ. այս փրկարար յուսոյ իրականացումի ակնկալութեամբ կ'տրոփէ ամենուս սիրտը։ Սակայն եթէ կը բաղձանք որ այդ համագումարը մեր յոյսերու իրականացման նախադուռը ըլլայ, պէտք է ջանանք որ այդ ժողովը Ամերիկայի ամբողջ Հայ գաղթականութիւնը ներկայացնող պատկառելի մարմին մը լինի։

Ուրեմն, երբ հայ մարմիններ, կազմակերպութիւններ ի մի կ'համախմբին իրենց նուիրակներն ընտրելու, իրենց ժողովասրահներու ճակատն կախելու են «Մի ոք յերեխայից, մի ոք ի թերահաւատից, մի ոք ի շարլաթանից և ի խաչագողաց, մի ոք ի վասակաց... մերձեսցի»ի յուշարարը պարունակող տախտակ մի խոշոր տառերով գրուած։ Համաժողովը կազմող նուիրակները հեղեղատին եզերքը աւագէ խաղալիք բաղնիքներ շինելու չեն երթար Ուստր. Հայութեան ներկան և ապագան է զիրենք հոն քաշողը, ուստի քուէարկուն ի բաց թողելու է անձնական կրքի տեղացիական, կուսակցական և յարանուանական հաշիւները. «իմ քաղաքացիս, իմ գեղացիս, իմ խնամիս, իմ օրթաղս, իմ կրօնակիցս, պանքայի գիրքը» չպիտի լինին քուէարկուն կառավարող մտածութիւնը. քուէն արժանիին, յարմարութեան տալու է։ Ուստր գնացող ներկայացուցիչները լինելու են հայրենիքի շահերուն անձնուէր, ճշմարիտ և անկեղծ հայեր, նը-կարագրի տէր, կարող, զարգացեալ, լուրջ խորհող, փորձուած և վստահելի։

Համագումարը մէկ ոստումով ամէն ինչ անմիջապէս չկրնար իրագործել, բայց հիմը կրնայ դնել։

Թէ ի՛նչ պէտք է լինի այս ընդհ. կազմակերպութեան գործունէութեան ծրագրի կռուանը, բնութիւնը... ասիսնդրոց մանրամասնութիւնը ոչ կրնանք նախատեսել, ոչ ալ խոհեմութիւն է հրապարակի վրայ նախավիճել։

Օ՜ն ուրեմն, ընտրենք մեր նուիրակները, թող Համաժողովը Ամերիկայի Հայ գաղթականութեան ճշմարիտ ներկայացուցիչը ըլլայ, և թող այդ պատկառելի ժողովը, Հայութեան փրկագործութեան պատմութեանը մէջ նոր էջ մը բանայ. և մենք գործենք, յուսանք եւ սպասենք։

Մ. Պ. ԾԵՐՕՆԵԱՆ

ԱՆԲԱՂԴ ՄԱՐՕԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Հաղարից մինը)

—o—

«Շատ չի քշեց մեր դուռը կոտրեցին և բազմաթիւ զինուած քրդեր տան չորս կողմ լեցուեցան կողոպտելու և ինձ փնտռելու։ Թոնիրին մէջ պահուէլ էի. (ի՜նչ խեղճ ու կրակ միջոց). ձեռքումս մի դանակ լինէր ինքզինքս սպաննէի գոնէ կը մտածէի, բայց ուրիշ մտմտուք մը աւելի դառն սիրտս կը կտրտեր։ Մուրատը հիմակ ո՞ւր էր, ողջ թէ մեռած. չպիտի՛ դար ինծի օգնութեան. չպիտի՛ հասնէր զիս փրկելու։ Ինձ այնպէս էր թուում, որ նա աշխարհքում ամենակարիճ և կարող անձն էր, և եթէ կամենար այդ բոլոր խուժանին ցրուել ոչնչացնել, դժուարին բան մը չէր։

«Ալ ինչ երկարացնեմ, գտան ինձ, մոմի պէս հալած. աւելի մեռած քան կենդանի՝ քաշկռտելէն դուրս հանեցին։ Մեծ ցաւս հոն էր պահուած։

«Մուրատն եկել յաւար։ Խեղճը մի թուր ունէր որպէս զէնք. մի քանիսին վիրաւորած, շատերին փախցրած բայց ախը մի մարդ, մի հողեղէն. ինչքան էլ սրատ լինէր, ի՞նչ անէր այդ անհամար արիւնոտ գազանների մէջ, ո՛ւր էր թէ մեր գիւղում մի 8-10 նրա պէս կտրիճներ զէնք ու հրացան ունենային. ես գիտեմ թէ այդ ատեն ինչ կը լինէր այդ չների վիճակ. բայց դա չիկար։

«Աչքերս Մուրատին էի յառած, ասլան էր դառած և կրակ կտրած և ոչ իսկ կզգար կարծես ստացած քանիմ՝ վէրքերի ծանր ցաւը. որոնցից հոսող արիւն իր շուրջն ու բոլոր կարմիր ներկում էր։

«—Մարթ՛, քու ջանիդ զուրպան, թող մեռնէի որ աչքերս չի տեսնէին քեզ էդ հալում։ Ա՛խ ես ի՞նչ անեմ, ո՛վ Աստուած,, , ասաց նա իրա դողդոջուն ձայնով. և արդարև արիւնաքամ թուլացած քիչ յետոյ բազուկներից թուրը վար ինկաւ և ինքն էլ հոգին կքելով մնաց տեղն ու տեղ։

«Կարող էք հասկանալ, սիրտս մոմուռից կտրտում էր. եթէ դանակով ծակէին պուտ մը արիւն իսկ չպիտի երթար ինձնից, չորցել, ցամքել էի։

«Քրդերը երբ տեսան ջահիլ ջէյրանիս այդ վիճակում, սիրտ առին և չորս կողմից անօթի գայլերի պէս վրան իյնալով, զինք կապեցին, թէև ատոր հարկ չիկար։

«Այն ատեն Շաքիր նրան ոտքերից բռնած իմ առաջ քաշ տալով «քեաֆիր աղջիկ քո յոյսդ ու ապաւէնդ էս տղան էր այնպէս չէ՞ ասաց, տե՛ս ուրեմն ահա ես նրան ինչ կանեմ և քեզ ինչ...։»

«Ահ ալ աչքերս գոցուեցան, խելքս գնաց և ուշակորոյս հոն ինկայ։ Աստուած խնայեց գիս, որ բաց աչքերովս չի տեսայ կիսամեռ Մուրատիս չարչարալից մահը...։

* * *

«Աչքերս բացի. Շաքիրենց տանն էի. այն տանն ուր հաղարաւոր անգամներ գործի և ծառայութեան համար գացել էի արձակ համարձակ։ Ու ալ կը հասկնայի կամաց կամաց թէ ինչ սև եկել էր վրաս. աչքերս փակեցի կրկին, չէի ուզեր նայիլ, ո՛րքան կը ցանկանայի որ մահը հաստ լինէր, ու ալ չի արթննայի...։

Ինձ շատ չի թողին մեր գիւղում. այլ գիւղից գիւղ և տնից տուն ինձ մանէին ածում, ալ ես էլ չէի գիտեր թէ ինչ գառել էի, սիրտս ու զգացմունքս ցամքել էին այլ ևս։

«Տուն տեղերնիս, ամէն եղած չեղածներով քարուքանդ և ցիրուցան եղել. սպանուածներ սպանուած, մնացածներն էլ փախել էին, և ո՛ գիտէ ուր ապաստանած լուր չունէի ծնողներիցս. ոչ մեր խնամիներից ոչ հարևաններից և ոչ էլ քաղաք գնացողներից։

«Այսպէս անցաւ ժամանակ մը ձմեռը քիչ շատ հանդարտած կերևէր աշխարհք, իմ վիճակս և բաղդս միայն այէկոծ էր, ալ մարդ չէի—Աստուծոյ արարած. այլ խաղալիք. զուարճութեան առարկայ՝ որս նրանց ձեռքում...։

«Շատ չեմ յիշում 15-20 քրդական գիւղեր ինձ պտոյտ տալից յետ, հերթ քաղքի քրդերին հասաւ։ «Նէ կիւզէլ տըր» ասել էին և այս անգամ էլ նրանք տիրացան ինձ և գիշերով մը Հայոց Զորից Արտամէտ տարին և ապա Վան, ուր շէնի թրքական թաղի տներից միում պահեցին։

«Ալ կեանքս չան կեանք էր. գոնէ քրդերի մէջ էնպէս չէի, ամէն գիշեր 10-20 շներ հաւաքուած ինձնով զուարճանում էին։...

Այո՛ կեանքիցս ճանցրացել որքա՞ն ուրախ պիտի լինէի մեռնելու. բայց հոգիս կարծես շատ ամուր փակած էր մարմնիս, այդ ամէնքը. այդ անտանելիներ անգամ կը տանէի և բան մը չուներ։ Մարդս երկաթից ամուր է կասեն, սուտ չի. գէթ այդ ես տեսայ իմ ցաւերիս մէջ և փորձեցի։...

«Ալ վանսումն էի, կը մտածէի. հայի քաղաք. այլևս ճարս ու մտածումս փախուստի միջոցների վրայ էր. ինչ որ սակայն դիւրին չէր խիստ հսկողութիւնների պատճառով։ Հայերից ոչ ոք կարող էր գիտենալ բնականաբար իմ այդ կացութիւն. և ո՛վ գիտէ քանի ինձպէսներ այսպէս անհայտ այստեղ ու այնտեղ պահուած էին։

«Մուրատիս ստուեր ինձ տանջում էր. չուն թուրքերի զուարճութիւններ կարծես մէկ մէկ նախատինքներ լինէին դէպի նրա անմոռաց յիշատակ։ Ցուզ ման ատեններ այլևս անցել. կամաց կամաց կսկսէի ինքնիրանս տէր դառնալ և խորհիլ անելիքիս վրայ։ Թուրքեր համակերպող բնաւորութիւնիցս սիրտ առած, աւելի վստահող և բարեհամբոյր դառել էին դէպ ինձ։

«Մէհմէտ պէկէնց տունն էի։ Վերջին ատեններ կարծես նրան ինձմով աւելի զբաղուած կը տեսնէի. դա իմ գործիս կը գար։ Մի օր երբ իրա բարեկամներ ինձ էին պահանջում բանակռուի բռնուեց նրանց հետ «դիակիս հետ միայն դուրս կը տանէք» ասաց և որովհետև՝ ինչպէս գիտէք, շատ բարբարոս և արիւնարբու մէկը լինելուն, միւսներ ձայն չի կրցին հանել և զայրացած հեռացան։

«Այդ ձմեռը ինչպէս կասէին Ցէդայի գէմանի լինելուն, Վանի մէջ իշխանութիւն կարծես չքացած լինէր. և այդ պատճառով էլ տան վրայ յարձակումների սպառնալիքների երկիւղից գրեթէ գիշերն ի բուն միշտ իր ծառաներով միասին հսկողութիւն կանէր։

"Բաւական ատեն վերջ ամէն ինչ հանդարտած կը թուէր. և հսկողութիւններ թուլացած։ Օր մը ծառաներ գիշեր ուշ ատեն իրանց սովորական տեղը ախոռում քնել էին. տան միւս անդամները ալ իրանց սենեակում. իսկ պէկը զուարթ, կիսամերկ սեփրին գլուխ նստած սիկարը ձեռին. ինձ նայում և հանաքներ անում. և ծիծաղելով ասում էր "ինշալլահ, շատ չուտով դու մեր ուղղափառ կրօնն պիտի՝ ընդունիս, այնպէս չէ՞. և տանս տիրուհին պիտի դառնաս տէհմի թաս օղի էլ տուր»։ Եւ այդ գիշեր այդ բանը մանաւանդ իմ անելովս շատ կրկնուեց. պէկի աչքեր չռեցան, ծանրացան և իյնալով կռնակի վրայ խռկալ սկսեց։

«Կէս գիշեր անցել էր, տան ամէն անկիւն խաւար պատած. լռութիւն ամէն կողմ պատել էր։ Ձայն-ձուն չկար։ Դուրսը սարսափելի հով կընէր սակայն, և պարզ և աստեղալից երկնքին տակ փչող ցուրտից կեանքը մեռած լինէր կարծես։

«Քանիմը թաս օղի էլ ես ճնկած լինելուս, ամէն ինչ աչքիս կը դառնար, երկիւղ սրտիցս ելեր էր։ Անգամ մը դուրս աչք տալուց. դէպի փողոցի դուռը առաջացայ. ներքևից ամուր և բանալիներով փակուած լինելով այնտեղից գընալ անհնար կը դառնար։ Շատ չի քշեց ուրիշ խելք մտածեցի (և ինչեր ասես պիտի չմտածէի), չուան մը առի և երես բացից (տէրրաս) փողոց նայող առաջին յարկի պատուհանին քով սիւնին կապեցի։ Այնպէս պատրաստելուց յետ սենեակ վերադարձայ։ Պէկը թանձր քունի մէջ ինկել էր. գլուխն կը դառնար, մտածումներիս և խորհուրդիս տպաւորութիւն, վիճակիս և լքումներիս յիշատակ և ինձ համար մեռնող Մուրատիս ստուերն ու անմոռաց սէրն ինձ քաջութիւն կը ներշնչէին. չի կասելու, չի թուլնալու։ Այս ամէնքին վերջ մը պէտք էր և արդար վրէժխնդրութիւնմը։ Այլևս այդ մի քանի ամիս առաջուայ փափկասիրտ Մարօն չէր մնացեր. մեղք իրանց վզին։ Պէկի զէնքեր հոն էին, իր գլխին վերև, վեց հարուածեանմը կողքիս կապեցի վերարկուիս տակ և խէնչարն էլ մերկացրած երեսս խաչակնքելով, աչքերս կիսադոց ծունկի եկայ. պէկի սրունքներ երկու ոտներիս մէջտեղ առնելով։ Շատ չի շարժեցաւ, իմ ներկայութիւնս զգալով, ձեռներն ինձ երկարեցրեց կրծքին սեղմելու։ Պաղարիւնութիւնս չէի

կորցնում. խէնչարը մերկ կուրծքին դրի և ամուրմը վրան ինկայ աչքս գոցած, ճիշտ այնպէս, ինչպէս նա ամէն տեէն իմ վրաս: Պէկի ձեռքերն ալ կարծես ջըղաձգաբար օգնեցին, ինձ սրտին սեղմելով: Զէնքը սիրտը խրեցաւ. պէկը ճիկ մը հանեց միայն և դադրեցաւ:

«Վրէժխնդրութիւն մասամբ կատարուած էր:...

«Կաթիլ մը արիւն իսկ դուրս չեկաւ. զէնքը սրտում մնաց. ճրագ մարեցի կամացուկ մը դուրս ելայ և պատուհանից սողոսկելով վար իջայ: Ո՞ւր գնայի ես էլ չէի գիտեր: Վանը չէի ճանչնար: Խիստ ցուրտը սթափեցնում էր ինձ, կամաց կամաց և աչքիս առաջ բերում ոճիրս: Շտապով փախչում էի հանդիպած ուղղութեամբ. փողոցներն ամայի էին և ոչ ոք կերեւէր այդ միջոցներում: Մին էլ փա՜ռք Աստուծոյ, եկեղեցւոյ կոչնակի ձայնը հասաւ ականջիս: Ձայնը շատ հեռի չէր երեւում, արագ դէպի այդ կողմ դիմեցի և շատ չանցած հայ թաղերի մէջ էի այլ ես ու փրկուած:»

Ամէնքս ալ յուզուած այդ պատմութեամբ, չը կրցինք զսպել գոհունակութեան ճիչմը. այդ վերջաւորութեան համար:

—. Բայց չե՞ս վախենում որ մի օր կարենան քեզ ձեռք բերելով վրէժխնդիր լինել, հարցրեց հիւրերից մինը:

—. Ի բարեբախտաբար անեցիքը կարծել են որ այդ ոճիրը կատարել են Նրա ընկերները:

—. Ապա այդ տղան ինչ պէ՞ս ունեցար յարեց մի ուրիշը:

—. Ինչպէս ամէնքը: Փախչելուց և քանիմ օր հանգիստ մնալուց յետոյ միայն զգացի որ տղով եմ մնացել մի քանի ամսով. կեանքս այնքան խստանակ էր և ես չէի կրցած կռահել:

—. Իսկ ո՞վ է դրա հայրը, գիտե՞ս արդեօք:

—. Ի՛հ այդ էլ չգիտեմ, և ի՞նչպէս կարող էի գիտենալ, բայց մի բան որին ապահով եմ սա է, որ սա իմ որդիս է և դժբաղդութիններիս հարազատ պտուղըն ու վկան... և այս ասելով նա ամուր մը իր լեք կուրծքին սեղմեց մանուկը և արտասուալից աչքերով ջերմաջերմ համբոյրներ դրեց Նրա թխլիկ այտերին:

Մօր զգացումն էր որ կը տիրապետէր այլ եւս Նրա բազմատանջ սրտում:

Մ. Ս.

ՀՐԱՒԷՐԻՆ ԱՌԹԻՒ

Առ որ անկ է,—

«Ըլլալ կամ չըլլալ. այս է խնդիրը,, ուրեմն ընդդիմխօս պարոններու ըրածն ու գրածն առաջ նկատի առնելու՝ Նոր Հնչակեաններու բնական և կանխատես հրաւէրն գործնականացնելու բանաւոր միջոցներուն պէտք է ձեռնարկել անմիջապէս:

Ժամանակը կանցնի: Ամէն սահող վայրկեան ահագին պատասխանատուութեան մը ահաւորութիւնը կը յիշեցնէ մեզ լռին պերճախօսութեամբ: Մանր մունր ու անպէտ ձեւականութեանց չուրջը չդեգերինք. ժամ առաջ մեր հայրենասիրական և ազգային պարտականութիւնները, հաւաքաբար, վճռական դիրքի մէջ դնել փութանք: Ո՞վ խմբագրեց հրաւէրը, նոր Հնչակեանները ի՞նչ իրաւունք ունին այդպիսի հրաւէր մը ընելու, Նահանգային Վարչութիւն կոչուած մարմինը համաժողով սարքելու արտօնութիւնը ուստի՞ ստացաւ, այս և ասոնց նման հարցեր, տարտամ մաքերէ և ցանցառ խելապատակներէ կը վիժին և առիթ կուտան մեզ ենթադրել թէ այդ հարցերու հեղինակները հաւկթի մէջ մազ փնտռողներ են միայն,,:

Անկեղծութիւնը կը պահանջէ որ խօստովանինք թէ անցեալ երեք կամ չորս, չըսենք տասը կամ աւելի, տարիներու մէջ, մեր յեղափոխական մարմիններէ և ոչ մին կրցած է դէպ յառաջ նշանակելի քայլ մը առնել: Այս ողբալի յետամնացութեան գաղտնիքը՝ հասարակութեան դէպի յեղափոխական մարմինները ցոյց տուած ցուրտ և վարանոտ վերաբերմունքին մէջ պէտք է փնտռել այնքան. որքան և աւելի իսկ՝ այս մարմիններու դէպ իրար բռնած պախարակելի ուղղութեան:

Մին այսպէս կուղէ, միւսն այնպէս. և տակաւին ուրիշ մ'ալ կելլէ, կը պահանջէ որ միոյն կամ միւսին չանսանք այլ իրեն հետեւինք. և այս տարբեր ոյժերու միացումէն գոյանալիք ահագին զօրութիւնը որ դահեր կրնայ սարսել և բռնաւորներ դողացնել, իրենց ուրոյն և անջատ վիճակին մէջ՝ ոչ միայն ապարդիւն կը մնան այլ և լքում, վհատում և յուսախաբութիւն կը պատճառեն չէզոքին և կրաւորականին հաւասարապէս:

Միանգամ ընդ միշտ ազգին այս անդամալուծուած ուժերն ի մի կէտ կեդրոնացնելու ճարը և միջոցը փնտռելու ենք միահաղոյն:

Սխալ չհասկցուիմ: Վայրկենական հրաշքի չեմ հաւատար և չեմ կարծեր թէ առաջարկեալ կամ գումարելի համաժողովը, հայոցս համար, այսպիսի փառաւոր թուական մը ստեղծելու առիթը պիտի ներկայէ անմիջապէս, բայց չեմ ալ հաւատար երբէք թէ իրարմէ հեռի մնալով, զիրար չարաբանելով եւ իրարու աչք փորել փորձելով՝ կրնանք մեր հազար ու մէկ վէրքերու բուժմանը ու է կերպով նպաստել:

Ազգը, օրհասական հիւանդի մը պէս կը տուփայ: Զայն մահու անողոք ճիրաններէն փրկելու համար, իբրեւ վերջին միջոց, ճարտարագոյն բժիշկներէ բաղկացեալ խորհրդակցութեան մը պէտքը կը թելադրուի: Բժիշկներէ ոմանք, իբրեւ արհեստակիցներ, նախանձորդներ են իրարու. արդարացի՞ է սակայն որ առաջարկուած խորհրդածութիւնը խափանուի որո՞ւ ուսերուն պէտք է բառնալ հիւանդին տարաժամ մահուան պատասխանատուութիւնը: Պրն. բժիշկներ, ո՛վ որ էք, չէ՞ք հաճիր, պահ մը, ձեր անձնական տարբերութիւնները մէկ կողմ դնել սա հէք հիւանդին անկողնոյն քով և չէ՞ք ուզեր զայն բուժելու համեստ ճիգ մը ընել ձեր տաղանդի միացեալ ուժովը: Այնչա՞փ անգութ էք որ պիտի չուզէք զայն իր ծախիչ ցաւերէն փրկելու փորձին ձեռնարկել: Այս հիւանդը ձեր մայրն է, պարոններ! և դուք եղբայրներ էք: Կուսակցամոլական ոգին կուրացուցած է ձեր աչերը, բայց չենք ուզեր հաւատալ թէ պիտի ուզէք, ձեր մօր վշտին չկարեկցելու չափ յամառ մնալ՝ ձեր անհատական հակակրութեանց մէջ:

Նոր Հնչակեաններու հրաւէրն չէ որ զմեզ կը կը կոչէ՝ այլ հրաւէրն հարիւր հազարաւոր Հայ Նահատակներու որոց արեամբն սրսկուած է այսօր բովանդակ Հայութիւնը. հրաւէրն հազարաւոր հայ որբոց՝ որոց հացի աղաղակն Հայ ազգը հիմէն տապալելու չափ դղրդիչ է և հուժկու. հրաւէրն խղճի, Քրիստոնէութեան, քաղաքակրթութեան և մարդկութեան. հրաւէրն՝ մեր հայրենասիրութեան, մեր պարտաճանաչութեան և մեր ազգային արժանապատուութեան:

Տիար Ա. Վ. Հայրենիքի մէջ յեղափոխական ուժերու միացումն կը ջատագովէր, ու նոյնը այսօր ոգի ի բռին կը հակառակի ազգային համաժողովի հրաւէրին իրականացումին: Թող ներուի ինձ ըսել, թէ ձեւական և արուեստական միութիւններ բանի չեն գար. ազգին չէզոք ու կրաւորական դասակարգը, որոց ազգասիրական ձգտումները բնական է որ սխալ մեկնուի ծայրահեղ պաշտպանողականներէ, միացնելու են իրենց ձայնը չափաւոր կուսակցականներու ձայնին եւ պահանջեն այդ ուժերու ի մի ձուլումը, նոյն ատեն հաշտարարի դերը ստանձնելով: Գումարելի համաժողովն պէտք է այս ոգւով կառավարուի:

"Մէկտեղ ցանենք, մէկտեղ յօդնինք մէկտեղ թափին մեր քրտինքներ... որ կեանք առնեն Հայոց դաշտեր,,:

Հայ բանաստեղծին այս հոգեթունդ լարերուն մէջ կը խտանայ Ազգային վերակենդանութեան շինիչ ու դիւթիչ իտէալը:

ՍԻՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՑԵԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ՏԽՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օալմաստ 1900 Յունիս 18ին.

Երեի Խորէն սրբազանն ալ ստոր ջացաւ իւր այնպիսի վարմունքից, որից յետոյ սկսեց միւսներից զանազան ցաւակցական հարցերն անել: Ես նկատեի Խորէն սրբազանը որքան բարկացկոտ բընաւորութեան տէր էր, նոյնքան էլ սրտով բարի էր, ինչպէս յայտնապէս երեւում էր նորա ջերն էլ ծակ էր. փող պահող եպիսկոպոսներից չէր: Պատմում են որ ձեռք ինկած փողը խարջում է: մի անգամ մօտ 200 րուբլի փող ի... Սրբազանին ուղարկած միջոցին յայտնի եղաւ, որի փոքրաւորը—ծառան—փոխանակ փոստատան յանձնելու՝ փախչիլ ձգտում է, բայց շուտով է ձերբակալվում չարագործը, դեռ Երեւանեան Նահանգից դուրս չեկած: Մինչեւ այստեղը, մնացեալից վատ հոտ է գալիս....

Անցան չորս տարիներ. գուցէ և անցնին աւելի երկար տարիները: Այժմ երկար խորհրդածութիւններից վերջ նկատում եմ. ուր էինք, ուր հասանք. իսկ այսուհետեւ էլ սոյն ողբալի վիճակով՝ ինչ անենք որ ինչ լինինք: Մայր Հայրենիքը պարպուեցաւ թարմ ուժերից, գաղթականութիւնը՝ ինչպէս ամէն անգամ փորձով ցոյց տուել է, իսպառ կորստեան պիտի մատնուի, օտար երկիրներու հոտի բարքերն ու սովորութիւնները միայն ընդօրինակելով. (ի հարկէ վերջինս չեմ ակնարկում ինքզինքը ճանաչող անձնաւորութիւններին, որոնք խիստ քիչ բացառութիւն են կազմում) հայրենիքում մնացած ծերերը հետզհետէ մեռանում են, իսկ իրենց թողուցած որբերը՝ պահանջուած կրթութիւնը չեն կարող ստանալ: Եւ որ աւելի ցաւալին է՝ անխոհեմ դասակարգն էլ հանգիստ չի մնում. կոտորածի, սովի և զանազան պատահարների երկիւղը դեռ բոլորովին անցած չէ լեղապատառ ժողովրդեան սրտից, ինչպէս հայրենիքից ստացած վերջին նամակներով յայտնում են:

Շարունակ գանգատներ են լսվում թէ «մատնիչներ կան», եթէ մատնիչները խօսքով են յայտնում կառավարութեան, ապա ի՞նչ անենք այն թերթերը որոնք նպատակատեղին հասնելուց առաջ կառավարութեան ձեռքն է ինկնում. ու դեռ չատերին սպանելու սպառնալիքներ են ուղարկում: Իմ կարծիքով աւելի մատնիչները նոքա են, որոնք ի հարկին գործելու անընդունակ են: Ինչո՞ւ ամէն անփորձներին յայտնեցին իրենց գաղտնիքը՝ ինչո՞ւ առանց ընտրութեան կամ խտրութեան մասնաժողովների անդամներ վեր առին, որոնք այժմ հացի խնդրով, մի չոր փոր հացի համար ամենայն ինչ բազմապատկում և այնպէս են յայտնում կառավարութեան, ինչպէս վանից նոր եկողներից շատեր պատմում են: Այլեւս հերիք չէին անցեալ փորձերը վերստին փորձենք: Թրքական առածն ասում է, «Ամէն փսաս մի խրատ, ոչ փսաս վերջացաւ, ոչ խրատ»: Եթէ ուզում ենք ազգին և հայրենեաց մի օգուտ հասուցանել, պէտք է որ ամէն խորհուրդները տեղական խելահաս ժողովրդից հասկանանք նման ճարպիկ վաճառականաց. վասն զի այն ո՞ր յիմար վաճառականն է որ առանց իմանալու նախապէս թէ այն ինչ երկրում ի՛նչ ապրանք աւելի լաւ է ծախվում, ծախուց ներքեւ կը մտնէ ապրանքները փոխադրելու համար, ո՞ւր կը մնայ ուրեմն անմարսելի գաղափարները, որոնք դարձեալ իւրաքանչիւր տեղի ժողովրդեան կարող և միանգամայն սիրեցեալ անձնաւորութեանց միջոցաւ տարածելու էին ամենայն համբերութեամբ: Եթէ ամէն հովիւ կարող լինէր ուսուցիչ դառնալ, ձիադարմանը բժիշկ ու երկաթագործը ժամագործ, այլեւս ի՞նչ կը պակսէր մեզ: Ո՛չ, սխալվում են այն պարոնները՝ որոնք լաւ ու լուրջ ընտրութիւն չեն աներ: Ամէնքս էլ մարդ ենք. բայց ամէնքս էլ մի խելքի և կարողութեան տէր չենք, մանաւանդ մեզանում դեռ խիստ քիչ գաղտնապահներ կը գտնուին. մի գործ դեռ չը կատարած՝ օրերով առաջ յայտարարում ենք. այսպիսի պակասութիւններից ո՞րն թուենք:

Ուրեմն անցելոյն տխուր յիշատակ-

Երկուշաբթիէն մինչեւ ուրբաթ, իրիկունները ժամը 7½-9½ը Հայոց համար Անգլիերէն լեզուի դասախօսութիւններ կըլլան Սլլըթըն Վաշինկթըն դպրոցի մէջ, ուր մասնաւոր ջանիւք ու խնամօք կը դասախօսեն Տիարք Փ. Ա. Աղամեան և Մ. Կ. Թորոսեան: Փափաքողք սիրով կը հրաւիրուին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Զայն-Հայրենեացի անցեալ թուոյն մէջ Տիգրանակերտի գիւղերուն մէջ կատարուած նոր կոտորածը գուժեցինք: Այդ մասին տարբեր աղբիւրներէ կրկին լուրեր եկան: Առջի չարթուան լուրը Թրքական մատ կը հոտէր, ինչպէս գիտած էինք: Վերջին լուրերուն նայելով աւելի ճիշտ ու որոշ կերեւայ թէ կոտորածը կատարուեր է կառավարութեան թոյլտուութիւնով, եթէ ոչ հրահանգովը, զի նախ սուտ է թէ քիւրտերը Թրքական գիւղերու վրայ եւ յարձակեր են. երկրորդ ամբողջ 8 օրեր զինուորները կոտորածին ականատես ըլլալով՝ ոեւէ միջամտութիւն ըրած չեն ի նպաստ կոտորուող հայերուն, 4 հայ գիւղեր ամբողջովին անմարդաբնակ և աւերակ դարձեր են:

Բաւ է նք, կարմիր Թուականը, աւրինի տարին կը նորոգուի, չո՞րժեր որ արտասահմանի մէջ հայեր ամէն կողմ ազգային համաժողովներ գումարեն եւ խորհին խորհրդակցին թէ ինչ ճար կայ կոտորիչ գեին սուրը ի պատեան դարձունելու, մանաւանդ որ չարը խրախուսելու աւրթեններ չեն պակսիր հայ ոսոխներու կողմանէ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՖՐԵԶՆՕԻ ՄԷՋ

Հոկտ. 15ի կիրակի օրը Ֆրեզնոյի Հայոց նորաշէն եկեղեցիին Օծման արարողութիւնը կատարուեցաւ փառաւոր հանդէսով: Գեր. Յովսէփ Եպիսկոպոս կատարեր է Օծումը որուն հետ արարողութեանց մասնակցեր են Գեր. Աճարեան Վարդապետ Մելքոնեան, տեղւոյն հովիւը և Արժ. Տէր Գասպար Վարդանեան:

Տիար Հ. Մ. Նշկեան կարդացեր է եկեղեցւոյ հաշուեկշիռը, ուրկէ տեսնուեր է որ եկեղեցւոյ շինութեան ծախուց համագումարը եղած է 3800տօլար, չհաշուելով այն աշխատութիւնները որ ձրի շնորհուած են հայ արհեստաւորներու և աշխատաւորներու կողմանէ: Այդ ծախքին միայն 2300ը հաւաքուած է, կը պարտին 1500 տօլար. ուստի հանգանակութեան կը ձեռնարկուի և մէկ ժամէն 1300 տօլար կը գոյանայ:

Նշանակութեան արժանի է նաև այն կէտը որ տեղւոյն հայ բողոքական երեցներն առանց մտահան անելու, առանց աղմուկի և անօգուտ վէճերի, ներկայ տխուր յիշատակներն վրայ խորհին. Նորա դարման ու ճարն մտածենք. վասն զի այս ընթացքով ոչ ինչ չը շահեցանք:

Յարգելի Տօքթ. Ց. Արշակունին Զայն Հայրենեացի 37րդ. համարում խիստ գեղեցիկ ու լուրջ քննադատութիւններ արել էր. գովում եմ հեռանկատ Տօքթ. ի գաղափարները: Զայն Հայրենեացի այնպիսի յօդուածները խիստ շատ շահեկան և օգտակար են համարւում ժողովուրդի համար. մանաւանդ յախուռն բնաւորութիւն ունեցող ընթերցողների:

Թղթակից

Վերջ

M. HARPOOTLIAN,
P. O. Box 470, Worcester, Mass

ՍԵՂԱՆԱՒՈՐ ՓՈԽ. ԳՐՈՑ

Տաճկաստանի բոլոր քաղաքներն դրամ կը փոխադրենք: Մեր տան կեդրոնատեղին են Կ. Պոլիս ու Խարբերդ. Մեծ. Ցարուէթիւն էֆ. Խարբութլեան և եղբարք մեծ գումարով փոխ գիր առնողներուն մասնաւոր զեղչ կընենք: Ամէն գծի վըրայ նաւային տոմսակ կուտանք. տոմսակ ու դրամ հեռագրով կը ղրկենք Մարսէյլ:

Մեր խանութին հասցէն է
57 Hanover Street.
Միհրան Խարբութլեան
Ուստր

պատ. Ֆիլեան իր խօսքերովը քաջալերեր է հանգանակութիւնը ու ինքն ալ նիւթապէս մասնակցեր է հանգանակութեան։

Ռուսահայ յայտնի նկարիչ Պ. Գէորգ Բաշինջաղեան, գաղափարը յղացած էր ամենէն աւելի յաջող իւղանկարներէն մէկը ներկայացնել Պարսից Վեհ. Շահին Բարիզի մէջ։

Վեհ. Շահը, այդ նկարը տեսնելով զմայլեր էր անոր գեղեցկութեանը վրայ և այդ առթիւ սիրալիր խօսքեր ուղղած էր տաղանդաւոր նկարչին՝ որուն նախասիրած ճիւղն է Բէյլիսաժը։ Պ. Բաշինջաղեան, Վեհ. Շահին գնահատումը տեսնելով, փափաք յայտնած էր Ն. Վեհափառութեանը նուիրել իր նկարը, զոր Շահը մեծ սիրով կընդունի և կը հրամայէ թէհրան ղրկել։ Շաբաթէ մը ետք Բարիզի Պարսկական դեսպան Նազար աղա, Պ. Բաշինջաղեանի կը հաղորդէ Վեհ Շահին գոհունակութիւնը եղած նուէրին համար, ու միւս նոյն ատեն անոր կը յանձնէ Առիւծ և Արև պատուանշանը, ինչպէս նաև Վեհ. Շահին մէկ հրովարտակը՝ որով Ասպետի աստիճանը կը շնորհէր տաղանդաւոր հայ նկարչին։

Կ. Պոլսոյ հայ տարրական նախակրթարանները այս տարի ընդամենը 46 երկսեռ շրջանաւարտներ ունեցեր են ասոնցմէ միայն 44ը ներկայացուցեր են քննիչ յանձնաժողովին, կանոնական քննութիւնը անցուցնելու, և 37ը ստացեր են տարրական նախակրթարանի շրջանաւարտի վկայական։

Լօրէնս 22 Հոկտ. 1900

Տեղւոյս հայերը բաւական թուով քաղաքացի եղան այս տարի։

50 Քաղաքացիներ Քլըպ մը կազմեցին (Արմէնիօ Ամէրիքըն Ինտիփէնտենթ անուամբ։ Յատուկ ժողովով մը Հանրապետականաց սկզբունքները ընդունելով հրատարակուեցաւ տեղական թերթերու մէջ։ Հոկտ. 23 ին քաղաքացիական հրապ. ժողովմը տեղի ունեցաւ ուր ատենախօսեցին Քանկրէս մէն Նօքս և ուրիշ երկու հանրապետականներ, ինչպէս նաև հայ խօսողներ։

Ալֆա

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Ժամանակէ մը ի վեր Չինական գործերուն մէջ ամենէն ուշադրաւ և նշանակելի երեսը երևցաւ վերջերս կատարուած Անկլօ Գերման դաշնակցութեան մէջ. որով երկու մեծ պետութիւնները դաշինք կը կնքեն միասին պահպանել Չինաստանի բաց դուռի քաղաքականութիւնը. Չինաստանէն որևէ երկիր չը դրաւել ու եթէ ուրիշները երկիր դրաւել ուզեն՝ իրենց կը մնայ որոշել թէ ինչ միջոցաւ իրենք իրենց շահերը պիտի պաշտպանեն։

Այսու ամենայնիւ Չինական խնդրոյ ապագան այնքան մութը կը մնայ որքան էր սկիզբէն ի վեր։

Կ. Պոլսէն Հոկտ. 24 ին կը հեռագրուի Պերլին թէ Սուլթանը շատ անհանգիստ կը զգայ պետութեանց այն դիմումին վրայ թէ Կրետէի անկախութեան հրովարտակը ստորագրելու է։

Կերևի թէ պետութիւններն որոշած են նաւային ցոյց մը ընել Թրքական ջուրերուն վրայ, որուն դէմ Սուլթանը ի՛նչ ընելը չգիտեր, այնքան քիչ նաւեր ունենալուն համար։

Թիւրք կառավարութիւնը հայոց ոտքի ելլելը խափանելու նպատակաւ խիստ հալածանք ու ճնշում ի գործ կը դնէ. արդէն 800 յեղափոխական առաջնորդ համարուած հայեր ձերբակալուած և 500 աքսորուած են։

Ծ ԱԽՈՒ

Ածուխի և փայտի գործ, 2 ձի 2 կառք 1 պըկի, ձիու կազմած են. փայտ սղոցելու և ջարդելու մեքենաներ են. կը ծախենք կանխիկ դրամով շատ աժան։

J. L. HARDING,
425 Medford St.,
Charlestown, Mass.

ՄԱՍԻՍ ՆՊԱՐԵՂԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Massis Grocery Co.
38 Hudson St., Boston Mass.

Մեր անցեալի փորձառութիւնը եւ Թիւրքիոյ հետ ուղղակի առևտրական ճիւղեր հաստատելը շատերու հետ մըրցելու դիւրութիւն կուտայ մեզ։ Մենք առևտուրի շատութեան մէջ կը փնտռենք մեր շահը։

Հետևեալ ապանքներու գները ապացոյց են մեր խօսածին, Ուստրի պտուղական պլղուր և ծեծած 3 սէնթ փաւնտը կորկոտ 6 ս. պամեա 25 ս. աղցուած կարմիր ոսպ 6 ս. չաղցուած 5 ս. սիսեռ 5 ս. շերիա և մագարոն 5 ս. սալցա մեծ քան 23 փոքր 6½ ս. մուխաշար 3½ ս. սև զէյթին 9-10ս. խաշեր պանիր 32 ս. դահին հալվասի 15 ս. դահին 16 ս. աղը դրած տերև 10. թարմ պանիր, Կ. Պոլսէն եկած լօգում նա և տեղական լօգում, թիւրքի այէն եկած պաստրմայ, ֆըսթըխ, չեքեր լեպլեպի, լեպլեպի տեսակներովը։ պատէմ շէքերի, Տաճկաստանի մեղր, ուռուպ անուշ կարագ, զէյթուն եաղը (ամենալաւ) պաստեղ, ոճիկ։ Զաման գինձ քիմիոն, կարմիր պիպէռ, հինա, խունկ, խահվէի տէիրմէն, ճգվաներ։ Թուլուներ, նարկիլաներ, մանր աղցուած սուրմ դրի թուղթ, սիկարի թուղթ (Հիւանդանոցի)։ Սեղանի և փիանոի մետաքսեայ ծածկոցներ, ընծայի վերարերեալ այլ եւ այլ մետաքսեղէնք։ Զանազան տեսակ փարուճներ։ Հոս պատրաստած ամենալաւ պաստրմայ 30 ս. փաւնտը։ 3 տալերէն աւելի ապրանք գնողաց էքսբրէսը մենք կը վճարենք (միայն Պոստոն և շրջակայից համար) իսկ հեռի տեղերու համար 3 ս. զեղջ տալերին մեր առևտուրը կանխիկ է միշտ. դուրսերը C. O. D. կը ղրկենք. Հալէպի սապոն 5 ս. կտորը Կիրիտի սապոն 7 ս. կտորը։ Մեծ քանակութեամբ գնողաց մասնաւոր զեղջ. օրտըրները շուտով կը ղրկուին ըստ կանոնի

ԿՈՒԶԷՊ ԿԱԼՈՒԱԾ ԳՆԵԼ

Անոնք որ քաղաքին մէջ կամ քաղաքէն դուրս որևէ կալուած գնել կուզեն թող դիմեն հետևեալ հասցէին միջնորդ արտի և տան վաճառումի։

J. H. DONELLY,
REAL, ESTATE
City and Country Property,
Room 37
476 Main St., Worcester, Mass.

Նմուշի համար հետևեալ օրինակը կուտանք—

1600 տոլարի, դիւրին պայմաններով Ուստրի մօտերը՝ կալուած մը կը ծախուի որ ունի երկու երկ յարկանի տուներ, ախոռ մը, մեծ հաւնոց մը, բոլոր շէնքերուն մէջ վազուն ջուր. 16 գլուխ տավար պահելու խոտ, 460 քօտ փայտ, 100000 ոտնաչափ տեղի վրայ ատաղձեղէն և այլն և այլն.

ՃԻՇՏ ԿԷՍ ԳՆՈՎ

ԱՌ ՁԵՌՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ
Անգլիերէնէ Հայերէն

Գիշերային վարժարաններու բացման առթիւ և ի դիւրութիւն աղքատիկ ուսանելի սիրող ուսանողներու, մեր բառարաններու թղթակազմները, զորս նոր ստացանք կազմատուէն, պիտի վաճառենք ճիշտ կէս գնով, հատը §1,25ի։ Ճանապարհածախսը մեր վրայ է։ Գնելու համար դիմել առ

B. R. TOROSIAN,
West Hobokn, N. J.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՏՕՆԱՊԵՏ ՃԵԼԱԼԵԱՆ

38 Նիլանտ փողոց
Պոսթոն

Մենք ալ աժան ճաշ կուտանք, սակայն յաճախորդներ գոհացուցնելու համար աւելին պէտք է. մաքուր ճաշարան, մաքուր ապրանք, վարպետ խոհարար, համեղ կերակուր։ Մեր ընծը հաստատելու համար մէկ այցելութիւն մը բաւական է։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Տոքթոր Հ. Ս. Ճէլալեան, կառավարութենէն վկայեալ բժիշկ, իւր օֆիսին մէջ կը գտնուի

Կէս օրին 12 է մինչև 1.
Գիշերները 7 է մինչև 9.

Եւ պատրաստ է իրեն դիմող հիւանդաղգայինները ամենայն խնամօք դարմանել։

Հասցէն է

DR. H. S. JELALIAN,
11 Dartmouth St., BOSTON.

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ

Նիւ-Եորք 509 2դ. Ավինիօ

Տեղական և Արևելեան բազմատեսակ նպարեղէններ, լաւագոյն տեսակ ընդեղեններ, եղանակին համեմատ բանջարեղէններ և առօրեայ թարմ միս։ Հայկական պանիր փաւնտը 14 սէնթ, մեծաքանակ գնողաց 13 սէնթ. Ուստրի պատուական Պղլուր և Ծեծած փաւնտը 4 սէնթի մեծաքանակ գնողաց զեղջ կընենք Զիթապտուղ (զէյթուն) փաւնտը 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղջ կընեմ, 5 փաւնտի քէն սալայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը։ Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամէն տեսակ ապրանքներ, ա՛ղը դրուած եափրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանոնչ զէյթուն. Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա՛քառոնի լօքումի տեսակներովը, ոսպ աղցուած կամ չաղցուած, սումախ, սիսեռ Պոլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքարի տեսակներով, քիմիոն, անասոն, պատուական խունկ. աղւոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՛ղած յանձնարարութիւնը փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով։ Վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ։

Նաև կը ծախեմ Պամիեա, Խայսերիի Պաստրմա Ցուճուղ և սիկարի թուղթ։

ԱՆԱՀԻՏ

Հանդէս Աղգային, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաժանորդագրութիւնը։

Հասցէ

ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆ
6 Place de L'odeon Paris

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
(11 Քառլ փողոց Ուստր)

Շաբաթական պօրտը $1,75 ս. է իւրաքանչիւր ժուռմին երեք պնակ կերակուր կը տրուի, մսեղէն, բանջարեղէն և սաուխլուղ. առաւօտները միայն դաւաթմը կաթ, իսկ եթէ մէկը պրդղայ կամ հաւկիթ ուտել ուզէ այն ատեն §2 պիտի վճարէ։ Կիրակի առաւօտները մէկ պնակ միսը պրդղայ կը տրուի, նաև փելերը կը պատրաստուին 5 տեսակ, միս, պանիր, փայ, մրգեղէն և առատ հաց. անգործներ եթէ ժամանակին կանոնիս համեմատ ճաշի գան §1,50 միայն վճարելու են։ Սենեակ և կամ ամբողջ յարկի տուն ուզողները ինձի դիմելու են։ Այս հրատարակութեանս թող չի ցաւին ճաշարանապետները, քանզի ես իրենց պէս խոհարար կամ գործաւոր չեմ պահեր, բոլոր գործերը ես կընեմ ատոր համար կրնամ վերի գներով պահել ժողովուրդը. ով որ կուզէ համեղ կերակուր ուտել թող մեզի հրամէ։ Նաև ուտելու իւղ կը ծախեմ փաւնտը 6 սէնթ։

Թադէոս Մամիկոնեան

Կ Ո Ի Զ Ո Ի Ի

Վարժ կօշկակար մը կուզուի որ քիչ մ'ալ Անգլիերէն գիտէ. առ այժմ շաբաթական 6 տոլար կուտամ, և մինչեւ §8ի ասպարէզ կայ, շարունակական գործ.

դիմել առ
Ֆիչպուրկ
26 Academy St.,
Fitchburg, Mass.

ԱԶԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՝ Պոսթոնի թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՓԱՆԱՋ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԻՈՐ ԱԶԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Խայսէրի Պաստրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փաւնտը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին՝

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ
113 TYLER st BOSTON MASS

---

231 Իսթ 28 դդ. Փողոց
ՆԻՒ-ԵՈՐՔ

Մ. Գաղանճեան և Պ. Մուշեղեան։

Կը վաճառենք տեղական ու արևելեան ամէն տեսակ նպարեղէններ. Հօլսէյլի գնով. դիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ։ շուտով կը ղրկենք ուր որ ուզուի։

Ահա մեր գներուն ցանկը իւրաքանչիւր փաւնտ սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուստրի պուլղուր շատ մաքուր 3½. Հայկական պանիր 10. Լօքում շէքերի 10. Շամ ֆստիխ 26. Պամեայ 28. Ճերմակ ֆասիլեայ 5. Նուշ 18. Զամիչ 8. Սալոր 5. Խայսի 15. Ընկոյզ 14. Ֆնտիխ 13. Խուրմա 5. Լեպլեպու շաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիսառ 5. Գառին միս տեղս մորթուած 7. Խայսերի պաստրմայ և Սուճուխ 35. թէ աղի և թէ անլի լեպլեպու 15. Լեպլեպուին ամենալաւը 28. սէնթ ամէն մէկ փաւնտը։ Ունինք նաև Ռիմիոն. Զաման. Տարչին. Լեմոն թուզի և տեղական ապրանաց ամէն տեսակը։

ԳՐԱՎԱՃԱՌ
ԳՈՐԾԱԿԱԼ

Մենք Գրավաճառական գործակալութիւնը կը շարունակենք կապ ունենալով թէ Թիւրքիոյ թէ Ռուսիոյ և թէ Եւրոպիոյ բոլոր հայ տպարաններու հետ։

Ընտանեցած եմ նաև Իրաւունքի գործակալութիւնը. ամէն անոնք որ կը փափաքին կամ հատով և կամ տարեկանով «Իրաւունք» ստանալ, կրնան դիմել ինձի դրամը կրնաք ղրկել Մնի Օրտրով։

Խ. Պետիչեան

Անձնապէս դիմել ուզողները կրնան դալ 99 Կօրհամ Փողոց

Նամակի հասցէն է.

390 P. O. Box,
Lowell, Mass.

Պատիւ ունի ծանուցանել արդեն հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամատչելի են ամէն դասակարգի անձանց.

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Քալիֆորնիան և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, շամբանիա, մատթիքայ, գարեջուր, պրանտի, ափսինթ և այլն, իրենց ամեն տեսակներովն։

Փափաքողաց գներու ցուցակը ղրկուի առանց ո՛և է ծախքի։

Յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ եւ փութով։ Քաղաքին մէջ ապրանքներն ՀՐԻ կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է։

Ըմպելիներ կը վաճառուին թէ՝ մեծ և թէ՝ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով։ (Հօլսէյլ անարիթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք դայնս փոխել, եթէ պակաս ու վնասուած չըլլան։

Ըմպելիքներ լաւ վաճառուին չիշով, կալրնով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր։

Դիմել յիշեալ հասցէին կամ
Յ. Խ. ԽԷՐՊԼԻԿԵԱՆ,
535 ՈՒԷՍԹ 57դդ. Փողոց, Ն. Ե.